«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2020թ. Դեկտեմբեր 31

1. Ներածություն

(ա) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետմեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը:

(բ) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

Ընկերությունը հիմնադրվել է որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 2004թ-ին Հայաստանի Հանրապետությունում: Ընկերությունունի Հայաստանի Հանրապետությունում ոչ կյանքի ապահովագրության 11 դասերով գործունեության իրականացման լիցենզիա: Ընկերության գործունեությունը կարգավորվումէ ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Հյուսիսային պողոտա 10:

Ընկերությունունի մեկ մասնաճյուղ Կապանում, Հայաստանի Հանրապետությունում: Ընկերության ակտիվների և պարտավորությունների մեծամասնությունը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Ընկերության մայր կազմակերպությունն է հանդիսանում «Ռեգիոն ֆինանսական արդյունաբերական կորպորացիա» ՓԲԸ-ն:

2. Պատրաստման հիմունքներ

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

Այս ֆինանսական հաշվետվություններում կիրառվել են ՖՀՄՍ 15 *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ »*ստանդարտի պահանջները:Ընկերությունն օգտվել է ՖՀՄՍ4*«Ապահովագրության պայմանագրեր»* ստանդարտով նախատեսված ՖՀՄՍ9*«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտը կիրառելուց ժամանակավոր ազատումից և նախկինում չի կիրառել ՖՀՄՍ9-ի որևէ տարբերակ, ներառյալ՝որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող նախատեսված ֆինանսական պարտավորությունների գծով շահույթի կամ վնասի ներկայացման պահանջները նախքան 2018թ. հունվարի 1-սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Համապատասխանաբար, Ընկերությունը մտադիր է սկսելկիրառել ՖՀՄՍ9-ն ամբողջական առումով2021թ. հունվարի 1-ից:

2.2 Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորություններըհաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

2.4 Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ների պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:
ՖՀՄՍ 4-ի համաձայն՝ ապահովագրողի գործունեությունն առավելապես կապված է ապահովագրության հետ միայն այն դեպքում, երբ

(ա) ՖՀՄՍ 4-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերից առաջացողնրա պարտավորությունների հաշվեկշռային արժեքը, որը ներառում է ավանդային բաղադրիչները կամ ապահովագրության պայմանագրից տարանջատված պարունակվող ածանցյալ գործիքները, էական է ի համեմատություն ապահովագրողի բոլոր ֆինանսական պարտավորությունների ընդհանուր արժեքից, և
(բ) ապահովագրության հետ կապված պարտավորությունների ընդհանուր հաշվեկշռային արժեքի և բոլոր պարտավորությունների ընդհանուր հաշվեկշռային արժեքի տոկոսային հարաբերակցությունը՝
   (i) գերազանցում է 90 տոկոսը, կամ
   (ii) պակաս է 90 տոկոսից կամ հավասար է 90 տոկոսի, սակայն գերազանցում է 80 տոկոսը, և ապահովագրողը չի իրականացնում ապահովագրության հետ առնչություն չունեցող նշանակալի գործունեություն:

ՖՀՄՍ 4-ի համաձայն՝ ապահովագրողի գործունեության հետ կապված պարտավորությունները ներառում են.

(ա) ՖՀՄՍ 4-ի գործողության ոլորտում գտնվող պայմանագրերից առաջացողպարտավորությունները,
(բ) ածանցյալ գործիք չհանդիսացող պարտավորությունները ներդրումային պայմանագրերի գծով, որոնք չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով՝ կիրառելով ՀՀՄՍ 39-ը և
(գ) պարտավարությունները, որոնք առաջանում է ապահովագրողի կողմից (ա) և (բ) կետերում նշված պայմանագրերը կնքելիս կամ այդ պայմանագրերով նախատեսված պարտավորությունները կատարելիս: Այսպիսի պարտավորությունների օրինակները ներառում են ռիսկերի նվազեցման համար օգտագործվող ածանցյալ գործիքները, որոնք առաջանում են նշված պայմանագրերի կամ այդ պայմանագրերն ապահովող ակտիվների հետ կապված, համապատասխան հարկային պարտավորությունները, մասնավորապես, նշված պայմանագրերից առաջացող պարտավորությունների հետ կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկային պարտավորությունները, թողարկված պարտքային գործիքները, որոնք ներառված են ապահովագրողի նորմատիվային կապիտալում, ապահովագարական գործունեությունում

ներգրավված աշխատակիցների աշխատավարձի և այլ հատուցումների գծով պարտավորությունները:

Ընկերությունը ներգրավված չէ ապահովագրության հետ առնչություն չունեցող այնպիսի նշանակալի գործունեությունում, որից կարող է ստանալ եկամուտ կամ որի հետ կապված կարող է կրել ծախսեր: Ընկերության նկատմամբ կիրառելի են ապահովագրողներին վերաբերող բոլոր օրենսդրական պահանջները, և ապահովագրական ռիսկն այն դիտարկում է որպես իր հիմնական բիզնես ռիսկը:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 15-ը 2018թ. հունվարի 1-ից:

ՖՀՄՍ 15 ***«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»***

ՖՀՄՍ 15 ստանդարտը սահմանում է համապարփակ հիմունքներ, որոշելու համար, թե որ հանգամանքներում, ինչ չափով և երբ պետք է ճանաչվի հասույթը: Ստանդարտը փոխարինել է ՀՀՄՍ 18 *«Հասույթ»*, ՀՀՄՍ 11 *«Կառուցման պայմանագրեր»* և հարակից մեկնաբանությունները:

Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 15-ը 2018թ. հունվարի 1-ից հետևողական, համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ առանց պրակտիկ բնույթի պարզեցումներից օգտվելու: ՖՀՄՍ 15-ի կիրառումն ազդեցություն չի ունեցել Ընկերության հաճախորդների հետ պայմանագրերի գծով միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամտի ճանաչման ժամկետների և գումարների վրա:

Ապահովագրության պայմանագրեր

(i) Պայմանագրերի դասակարգում

Ապահովագրության պայմանագիրն այն պայմանագիրն է, համաձայն որի Ընկերությունը պայմանագրի մյուս կողմից (ապահովադրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին կամ այլ շահառուին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրիկամ այլ շահառուի վրա: Ապահովագրական ռիսկը չի ներառում ֆինանսական ռիսկը: Ֆինանսական ռիսկը հետևյալ նշվածներից մեկի կամ մի քանիսի հնարավոր ապագա փոփոխության ռիսկն է՝ տոկոսադրույք, արժեթղթի գին, ապրանքի գին, արտարժույթի փոխարժեք, գների կամ դրույքների ինդեքս, վարկանիշ կամ վարկային ինդեքս կամ այլ փոփոխական՝ պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում, այդ փոփոխականը հատուկ չէ պայմանագրի կողմերից մեկին: Ապահովագրության պայմանագրերը կարող են փոխանցել նաև որոշ ֆինանսական ռիսկ: Ապահովագրական ռիսկը նշանակալի է այն և միայն այն դեպքում, եթե ապահովագրական պատահարը կարող է Ընկերության կողմից նշանակալի հատուցումների վճարման պատճառ դառնալ: Պայմանագիրը, որը դասվում է որպես ապահովագրության պայմանագիր, շարունակում էգործել որպես ապահովագրության պայմանագիր, մինչև բոլոր իրավունքների և պարտականությունների մարվելը, կամ դրանց ուժի մեջ լինելու ժամկետի լրանալը: Պայմանագրերը, որոնց համաձայն Ընկերությանն ապահովադրից փոխանցվող ռիսկը նշանակալի չէ, դասվում են որպես ֆինանսական գործիքներ:

(ii) Պայմանագրերի ճանաչում և չափում

Ապահովագրավճարներ

Ապահովագրավճարները բացահայտվում են առանց դադարեցումների, համախառն հիմունքով՝ ներառելով միջնորդներին վճարվելիք կոմիսիոն վճարները և բացառելով ապահովագրավճարների գծով հարկերը և տուրքերը: Ստացված ապահովագրավճարների վաստակած մասը ճանաչվում է որպես հասույթ: Ընկերությունն ապահովագրավճարները վաստակում է ռիսկն իր վրա վերցնելու ամսաթվից, փոխհատուցման ժամանակաշրջանի ընթացքում՝ կիրառելով համամասնական մեթոդն օրական կտրվածքով: Արտաքին վերաապահովագրության ապահովագրավճարները ճանաչվում են որպես ծախս՝ կիրառելով համամասնական մեթոդն օրական կտրվածքով: Արտաքին վերաապահովագրության ապահովագրավճարների այն մասը, որը չի ճանաչվում որպես ծախս, հաշվառվում է որպես կանխավճար:

Ապահովագրության պայմանագրերի դադարեցումը

Ապահովագրության պայմանագիրը դադարեցվում է, եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ ապահովադիրը չի ցանկանում կամ ի վիճակի չէ շարունակել ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրավճարների վճարումը: Այդ իսկ պատճառով, չեղյալ են հայտարարվում հիմնականում ապահովագրության այն պայմանագրերը, որոնցով նախատեսված ապահովագրավճարները վճարվում են մասնաբաժիններով ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

Չվաստակած ապահովագրավճարների պահուստ

Չվաստակած ապահովագրավճարների պահուստն իրենից ներկայացնում է համախառն ապահովագրավճարների այն մասը, որն ակնկալվում է վաստակել հաջորդ կամ հետագա

ֆինանսական տարիներում: Չվաստակած ապահովագրավճարների պահուստը հաշվարկվում է առանձին յուրաքանչյուր ապահովագրության պայմանագրի համար՝ օգտագործելով համամասնական մեթոդն օրական կտրվածքով:

Պահանջներ

Զուտ պահանջները ներառում են ֆինանսական տարվա ընթացքում վճարված հատուցումները՝ չվճարված պահանջների գծով պահուստի շարժի հետ մեկտեղ: Չվճարված պահանջները ներառում են հաշվետու ամսաթվի դրությամբ առաջացած, սակայն չվճարված բոլոր պահանջների կարգավորման համար գնահատված ամբողջ ծախսի գծով պահուստները, լինեն դրանք ներկայացված, թե՝ ոչ, ինչպես նաև հարակից պահանջների կարգավորման համար պահանջվող արտաքին ծախսերի գծով պահուստները:

Չվճարված պահանջները գնահատելու համար ուսումնասիրվում են առանձին պահանջները և ձևավորվում են պահուստներ տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջների գծով, ներքին և արտաքին կանխատեսելի դեպքերի հետևանքները, այդ թվում՝ պահանջների կարգավորման արտաքին ծախսերը, օրենսդրության փոփոխությունները, նախկին փորձը և միտումները: Չվճարված պահանջների գծով պահուստները չեն զեղչվում:

Վերաապահովագրության և սուբրոգացիայի գծով ակնկալվող վերականգնումները ճանաչվում են առանձին՝ որպես ակտիվներ: Վերաապահովագրության և սուբրոգացիայի գծով վերականգնումների գնահատման համար կիրառվում է չվճարված պահանջների գնահատման համար օգտագործվող մեթոդը:
Նախորդ տարիներին ձևավորված պահանջների գծով պահուստների գումարների ճշգրտումներն արտացոլվում են այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որի ընթացքում կատարվել են ճշգրտումները, և բացահայտվում են առանձին, էական լինելու դեպքում: Կիրառվող մեթոդները և կատարված գնահատումները վերանայվում են կանոնավոր հիմունքով:

(iii) Վերաապահովագրություն

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կիրառում է վերապահովագրությունը՝ ռիսկերի մի մասը վերապահովագրողներին փոխանցելու միջոցով իր հնարավոր զուտ վնասը սահմանափակելու համար: Վերաապահովագրության համաձայնագրերը չեն ազատում Ընկերությանն ապահովադիրների հանդեպ հանձն առած իր պարտականություններից:

Փոխանցված ապահովագրավճարները և փոխհատուցված օգուտները ներկայացվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ համախառն հիմունքով:

Վերաապահովագրության գծով ակտիվները ներառում են փոխանցված ապահովագրական պարտավորությունների դիմաց վերաապահովագրական ընկերություններից ստացվելիք գումարները: Վերաապահովագրությունից ստացվելիք գումարները գնահատվում են այն նույն մեթոդով, որը կիրառվում է չվճարված պահանջների պահուստի կամ վերաապահովագրության պայմանագրի հետ կապված կարգավորված պահանջների գնահատման համար:

Ստանձնած վերաապահովագրության գծով ապահովագրավճարները ճանաչվում են որպես հասույթ և հաշվառվում են այնպես, ինչպես կհաշվառվեին, եթե վերաապահովագրությունը համարվեր ուղղակի գործունեություն՝ հաշվի առնելով վերաապահովագրվող բիզնեսի ծառայությունների դասակարգումը:

Վերաապահովագրության պայմանագրերի շրջանակներում փոխհատուցման ենթակա գումարները գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Այս ակտիվները համարվում են արժեզրկված, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ Ընկերությունը կարող է չստանալ իրեն հասանելիք բոլոր գումարները՝ որպես վերաապահովագրական ակտիվի սկզբնապես ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքի արդյունք, և այդ դեպքն արժանահավատորեն չափելի ազդեցություն ունի այն գումարների վրա, որոնք Ընկերությունը կստանա վերաապահովագրողից:Որպես վերաապահովագրության գծով ակտիվներ հաշվառվում են միայն այն պայմանագրերի գծով իրավունքները, որոնք նախատեսում են նշանակալի ապահովագրական ռիսկի փոխանցում: Այն պայմանագրերի գծով իրավունքները, որոնք չեն նախատեսում նշանակալի ապահովագրական ռիսկի փոխանցում, հաշվառվում են որպես ֆինանսական գործիքներ:

(iv) Հետաձգված ձեռքբերման ծախսումներ

Ձեռքբերման ծախսումները, որոնք իրենցից ներկայացնում են ապահովագրական գործակալներին և բրոքերներին վճարված կոմիսիոն գումարներ և վերաապահովագրության գծով կոմիսիոն վճարներ, հետաձգվում ու ամորտիզացվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում Ընկերությունը վաստակում է համապատասխան ապահովագրավճարները:

(v) Պարտավորությունների համարժեքության ստուգում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացվում է պարտավորությունների համարժեքության ստուգում, որոշելու համար, թե արդյոք չվաստակած ապահովագրավճարների համարժեք են (հանած դրանց հետ կապված՝ ձեռքբերման հետաձգված ծախսումները գործունեության յուրաքանչյուր ոլորտի համար): Այս ստուգումների համար օգտագործվում են դրամական միջոցների ապագա պայմանագրային հոսքերի, այդ պահին գործող ապահովագրության պայմանագրերի չլրացած ժամկետներին վերագրելի պահանջների կարգավորման և ապահովագրության պայմանագրերի վարչարարության ծախսերի, ինչպես նաև նման պարտավորությունների վճարումը ապահովող ակտիվներից ստացված ներդրումային եկամտի ներկայիս լավագույն գնահատականը: Պակասորդի հայտնաբերման դեպքում, համապատասխան հետաձգված ձեռքբերման ծախսումները արժեզրկվում են, իսկ անհրաժեշտության դեպքում, ձևավորվում է լրացուցիչ պահուստ (ուժի մեջ գտնվող ռիսկերի պահուստ): Պակասորդը ճանաչվում է հաշվետու տարվա շահույթում կամ վնասում:

(vi) Ապահովագրության գծով ստացվելիք և վճարվելիք գումարներ

Ապահովադիրներին, գործակալներին և վերաապահովագրողներին վճարվելիք և նրանցից ստացվելիք գումարներն իրենցից ներկայացնում են ֆինանսական գործիքներ և ներառվում են ապահովագրության գծով ստացվելիք և վճարվելիք գումարների կազմում, այլ ոչ՝ ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներում կամ վերապահովագրության գծով ակտիվների կազմում: Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է ապահովագրության գծով ստացվելիք գումարներն արժեզրկման տեսանկյունից:

(գ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում ձեռքբերման ամսաթվից մինչև երեք ամիս մարման ժամկետովկանխիկ դրամական միջոցների մնացորդները նցպահանջ ավանդները, որոնց իրական արժեքը չի ենթարկվում էական փոփոխությունների:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(դ) Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Տրամադրված փոխառությունները և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

- որոնքԸնկերությունը մտադիր է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնքԸնկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցովիրական արժեքով չափվող,
- որոնքԸնկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չենորպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

(ii) Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվումենվերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

(iii) Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներիխմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ դրանց վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ փոխառություններիու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով:

(iv) Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(v) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիս բացակայության դեպքում, այն ամենաբարենպաստ շուկայում, որտեղԸնկերությունը հնարավորություն ունիմուտք գործել նշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Ընկերությունը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար: Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Ընկերությունը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:
Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Ընկերությունը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով, իսկ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգվում է: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն միայն մինչև այն պահը, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Ընկերությունը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Ընկերությունը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև շարժերն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում կատարվել են փոփոխությունները:

Ընկերությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների կատարման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ, որոնք դիտարկելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից:
- 3-րդ մակարդակ. ոչ դիտարկելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտարկելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտարկելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահաջվում են նշանակալի ոչ դիտարկելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

(vi) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք(բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

(vii) Ապաճանաչում

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ երբ ոչփոխանցումէ, ոչէլպահպանումէ ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցներըև չիպահպանումֆինանսականակտիվինկատմամբվերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Ընկերության կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Ընկերությունը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(viii) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(ե) Արժեզրկում

(i) Ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկված լինելու մասին: Նման վկայության առկայության դեպքում, Ընկերությունը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:
Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, ինչպիսիք են խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների անբարենպաստ փոփոխությունը:

Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերում ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ երկարատև նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման անկողմնակալ վկայություն:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են ապահովագրության գծով ստացելիք գումարները, տրամադրվածփոխառությունները և բանկային ավանդները (փոխառություններ և դեբիտորական պարտքեր): Ընկերությունը վերանայում է իր փոխառությունները և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Ընկերությունը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին փոխառությունների ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն փոխառությունների ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Ընկերությունը որոշում է, որ առանձին գնահատված փոխառության կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ փոխառությունը և դեբիտորական պարտքը պարտքային ռիսկի համանման բնութագրերով փոխառությունների և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն փոխառությունները և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է կամ շարունակում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է փոխառության կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես փոխառության կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ փոխառության կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախորդ ժամանակաշրջանների վնասների տվյալները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտարկելի տեղեկատվության հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Ընկերությունը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են՝ հաշվի առնելով ղեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինի նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են փոխառության կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ կիրառելի տվյալ հանգամանքների համար: Դա կարող է տեղի ունենալ, երբ փոխառուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման փոխառուներիվերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում, արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, վերջինիս առկայության դեպքում, Ընկերությունն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Փոխառությունների և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալ կերպով կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Այն դեպքերում, երբ փոխառության կամ դեբիտորական պարտքի հավաքագրումը հնարավոր չէ, այն դուրս է գրվում ի հաշիվ արժեզրկման գծով ձևավորված համապատասխան պահուստի: Ընկերությունը վ կամ դոբիտորական պարտքի մնացորդը (և արժեզրկման գծով ձևավորված ցանկացած պահուստը) դուրս է գրում, երբ ղեկավարությունը որոշում է, որ փոխառությունըկամ դեբիտորական պարտքը ենթակա չէ հավաքագրման և ձեռնարկվել են փոխառության կամ դեբիտորական պարտքի վերադարձի հետ կապված բոլոր անհրաժեշտ քայլերը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ՝ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(զ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

(է) Կանոնադրական կապիտալ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաժնեմասերը ենթակա են մարման բաժնետիրոջ հայեցողությամբ: Ընկերությունը պարտավոր է վճարել բաժնետերերի կազմից դուրս եկող բաժնետիրոջը տվյալ տարվա զուտ ակտիվների իր բաժնեմասը դրամական միջոցներով, կամ բաժնետիրոջ համաձայնությամբ՝ ակտիվների բնաիրային փոխանցման միջոցով:

ՀՀՍՍ 32 *«Ֆինանսական գործիքներ. Ներկայացում»* ստանդարտի համաձայն՝ բաժնետերերին վերագրելի զուտ ակտիվները դասակարգվում են որպես սեփական կապիտալ այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջաններում, քանի որ ղեկավարությունը եզրակացրել է, որ Ընկերության վերադարձելի ֆինանսական գործիքները բավարարում են ՀՀՍՍ 32 ստանդարտի սեփական կապիտալի ներկայացման բոլոր պահանջները:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով:

Ընկերության բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

(ը) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հոդվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը

ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի գծով վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից առաջացած այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք ազդեցություն չունեն հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների գումարը չափվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

(թ) Տոկոսային եկամտի և ծախսի ճանաչում

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտն ու ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Գործառնական վարձակալության գծով վճարումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը վարձակալության գործողության ժամկետի ընթացքում: Վարձակալությանը վերաբերող խրախուսող պայմանները ճանաչվում են որպես վարձակալության գծով ընդհանուր ծախսի անբաժանելի մաս՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

4. Փոխկապակցված կողմերի հետ կապված գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ փոխկապակցված կողմերի հետ: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

5. Ապահովագրավճարներ

	31.12.2020		31.12.2019	
	Համախառն ապվճար	Վերապվճար	Համախառն ապվճար	Վերապվճար
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	212,570	6,154	200,272	5,243
Առողջության ապահովագրություն	823,431	98,732	736,828	98,883
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	36,114	17,583	40,116	13,887
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	118,545	34,739	136,398	35,290
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	248,442	35,966	218,956	30,596
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	1,871	0	1,138	0
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	18,510	10,245	27,303	16,486
Վարկի ապահովագրություն	23,662		5,321	0
Ֆինանսական վնասների ապահովագրություն	3,992		72,621	46,113
Աջակցության ապահովագրություն	19,124		76,560	0
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	2,058,387		2,184,990	0
Վերադարձի ենթակա ապվճարներ	-74,984	-9,680	-108,548	-10,975
ՉԱՊ-ի փոփոխություններ	109,763	38,120	-325,678	25,998
Համախառն ապվճարների գծով հասույթ	3,599,427	231,859	3,266,277	261,521
Զուտ ապվճարներ	**3,367,568**		**3,004,756**	

	31.12.2020		31.12.2019	
	Համախառն հատուցումներ	Վերապ հատուցումներ	Համախառն հատուցումներ	Վերապ հատուցումներ
6. Պահանջներ				
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	100	0	500	-
Առողջության ապահովագրություն	330,996	47,830	252,915	-
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	26,382	12,631	30,010	18,469
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	26,354	19,133	17,150	10,002
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	3,466	1,474	495	
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	1,250			
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	500		1,235	-
Ֆինանսական վնասների ապահովագրություն	150,371	150,371		
Աջակցության ապահովագրություն	4,410	-	23,089	
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	1,160,216		1,235,755	
Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ	-38,898		-20,488	
Կարգավորման ծախսեր	29,104		30,359	
Ծախսեր ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում	60,366		38,367	
Փոփոխություն պահանջների պահուստում	-140,050	-184,987	26,567	-69,455
Ապահովագրական Հատուցումներ	1,614,567	46,452	1,635,954	-40,984
Զուտ հատուցումներ	**1,568,115**		**1,676,938**	

7. Ձեռքբերման ծախսումներ

	31.12.2020	31.12.2019
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	92,965	77,879
Առողջության ապահովագրություն	198,858	82,648
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	5,347	6,566
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	32,167	35,247
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	75,525	67,610
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրություն	432	
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	2,312	
Ֆինանսական վնասների ապահովագրություն		
Աջակցության ապահովագրություն	12,721	33,014
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	321,995	380,431
Ընդամենը	**742,322**	**683,395**

8. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

	31.12.2020	31.12.2019
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներից եկամուտ	10,674	145,730
Վաճառքի համար մատչելի արժեթղթերից տոկոսային եկամուտ	1,199,886	451,648
մինչև մարման ժամկետ պահվող արժեթղթերից տոկոսային եկամուտ	1,895	
Այլ տոկոսային եկամուտ	4	1,515
Տրամադրված փոխառություններից եկամուտ	4,129	4,114
Տոկոսային ծախսեր բանկերից ներգրավված ընթացիկ ռեպո համաձայնագրերի դիմաց	(285,393)	(252,148)
Ֆինանսական ակտիվների օտարումից (վաճառքից) զուտ եկամուտներ	136,688	
Արտարժույթի վերագնահատման արդյունքում զուտ եկամուտներ	(130)	61
Ընդամենը ներդրումային եկամուտ	**1,067,753**	**350,920**

9. Վարչական ծախսեր

	31.12.2020	31.12.2019
Աշխատակազմի գծով ծախսեր և աշխատավարձին վերաբերող հարկեր	340,139	301,683
Վարձակալություն	57,714	73,555
Հաշվապահական հաշվառման ծրագրի սպասարկման ծախսեր	34,505	28,784
Գրասենյակային ծախսեր	48,785	15,814
Հաղորդակցության ծախսեր	6,263	12,600
Գովազդ	2,894	8,317
Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրողների բյուրոյի անդամակցության վճարներ	846	7,988
Մաշվածություն և ամորտիզացիա	28,388	7,211
Այլ	27,072	46,787
Ընդամենը գործառնական և վարչական ծախսեր	**546,606**	**502,739**

10.Արժեզրկումից կորուստներ

	31.12.2020	31.12.2019
Ապահովագրության գծով ստացվելիք գումարների արժեզրկում	(36,670)	(24,281)

11.Շահույթհարկ

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակներով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերություններն առաջացնում են զուտ հետաձգված հարկային պարտավորություններ:

	31.12.2020	31.12.2019
Ընթացիկ հարկ	(246,991)	(74,919)
Հետաձգված հարկ	(13,008)	447
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	**(259,999)**	**(74,442)**

12.Հիմնական միջոցներ և Ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցներ	Կապ և հաղորդակցություն	Փոխդրամիջոց	Գույք և այլ հիմնական գրասենյակ	միջոցներ	ընդամենը
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ					
01/01/2019թ-ի դրությամբ	**42,196**	**18,760**	**16,727**	**1,125**	**78,808**
Ավելացում	10,735	16,241	1,964	1,033	29,973
Օտարում	(9,751)	(4,690)	(4,243)	(210)	(18,894)
31/12/2019թ-ի դրությամբ	**43,180**	**30,311**	**14,448**	**1,948**	**89,887**
Ավելացում	1,956	20,040	1,265	4,240	27,501
Օտարում	(3,844)		(476)		(4,320)
31/12/2020թ-ի դրությամբ	**41,292**	**50,351**	**15,237**	**6,188**	**113,068**
ԿՈՒՏԱԿՎԱԾ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ					
01/01/2019թ-ի դրությամբ	**41,592**	**18,760**	**15,917**	**448**	**76,717**
Ավելացում	6,546	936	503	127	8,112
Օտարում	(9,751)	(4,690)	(4,243)	(210)	(18,894)
31/12/2019թ-ի դրությամբ	**38,387**	**15,006**	**12,177**	**365**	**65,935**
Ավելացում	6,220	2,768	401	405	9,794
Օտարում	(3,844)		(476)		(4,320)
31/12/2020թ-ի դրությամբ	**40,763**	**17,774**	**12,102**	**770**	**71,409**
ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵՔ					
31/12/2020թ-ի դրությամբ	**529**	**32,577**	**3,135**	**5,418**	**41,659**
31/12/2019թ-ի դրությամբ	**4,793**	**15,305**	**2,271**	**1,583**	**23,952**

Ոչ նյութական ակտիվներ	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ		
01/01/2019թ-ի դրությամբ	**7,465**	**7,465**
Ավելացում		
31/12/2019թ-ի դրությամբ	**7,465**	**7,465**
Ավելացում	334	334
31/12/2020թ-ի դրությամբ	**7,799**	**7,799**
ԿՈՒՏԱԿՎԱԾ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ		
01/01/2019թ-ի դրությամբ	**5,925**	**5,925**
Հատկացումներ	190	190
Օտարում		

31/12/2019թ-ի դրությամբ	**6,115**	**6,115**
Հատկացումներ	206	206
Օտարում		
31/12/2020թ-ի դրությամբ	**6,321**	**6,321**
ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵՔ		
31/12/2020թ-ի դրությամբ	**1,478**	**1,478**
31/12/2019թ-ի դրությամբ	**1,350**	**1,350**

13.Այլ ակտիվներ

	31.12.2020	31.12.2019
Կանխվճարներ և այլ դեբիտորներ	139,936	114,503
Կանխավճարներ հարկերի գծով		25,484
Այլ Կանխավճարներ	2,839	2,619
Ընդամենը այլ ակտիվներ	**142,775**	**142,606**

14.Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

	31.12.2020	31.12.2019
Կորպորատիվ պարտատոմսեր առանց վարկանիշի	20,355	20,361
ՀՀ պետական տոկոսային արժեթղթեր	3,432,495	2,960,327
Ռեպո համաձայնագրերով վաճառված ՀՀ պետական տոկոսային արժեթղթեր	7,008,288	7,563,532
Բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրեր	6,764,497	6,865,209
Բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրեի գծով անվանական տոկոսներ	11,607	15,826

15. Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ

Սույն աղուսյակում ներկայացված պահանջների մեծությունը հաշվարկված է «միավոր պահանջի հատուցման միջին չափի» մեթոդով:

	31.12.2020		31.12.2019	
	Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություն	Վերաապահովա-գրական ակտիվներ	Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություն	Վերաապահովագրական ակտիվներ
Չվաստակած ապահովագրական վճարներ	1,165,359	47,975	1,275,122	86,096
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ	117,100		150,460	
Ներկայացված պահանջներ	537,671	244,105	644,362	431,233
Ընդամենը պահուստներ	**1,820,130**	**292,080**	**2,069,944**	**517,329**

16. Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ

	31.12.2020	31.12.2019
Գործակալներից ստացվելիք գումարներ՝ առաջացած ուղղակի ապահովագրության գործառնություններից	9,699	54,661
Ապահովադիրներից ստացվելիք գումարներ՝ առաջացած ուղղակի ապահովագրության գործառնություններից	166,455	142,690
Սուբրոգացիայի գծով ստացվելիք գումարներ	15,054	7,566
պահուստi արժեզրկում	(6,930)	(19,624)
Ապահովագրական ընկերություններից ստացվելիք գումարներ	15,573	26,385
Վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ	18,271	155
	218,122	**211,833**

17. Տրամադրված փոխառություններ

	31.12.2020	31.12.2019
Հայկական վարկային կազմակերպություններին տրամադրված փոխառություններ	50,333	50,332

Տրամադրված փոխառությունները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

18.Բանկային ավանդներ

	31.12.2020	31.12.2019
Ավանդներ	47,304	448,751
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	**47,304**	**448,751**

19.Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2020	31.12.2019
Կանխիկ դրամական միջոցներ		1,519
Կանխիկ դրամական միջոցներ ճանապարհին	13,844	50,469
Բանկային հաշիվներ	69,200	47,475
Արժեզրկումից պահուստ		
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**83,044**	**69,463**

20.Կանոնադրական կապիտալ

2020թ. առ դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմում է 968,000 հազ. դրամ:

Ընկերության մասնակիցները իրավունք ունեն ստանալու շահաբաժին և իրենց բաժնեմասերին համապատասխան ձայների իրավունք Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում:

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր ֆինանսականռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Ընկերութան կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված կանոնադրական կապիտալի 15 %-ի չափով:

21. Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ

	31.12.2020	31.12.2019
Վերաապահովագրության գծով վճարվելիք ապահովագրավճարներ	33,194	20,526
Գործակալներին և բրոքերներին վճարվելիք գումարներ	61,848	42,617
Վճարվելիք պահանջներ	2,882	4,523
Վերադարձման ենթակա ապահովագրավճարներ դադարեցված ապահովագրության պայմանագրերի գծով	8,733	2,729
	106,657	**70,395**

22. Այլ պարտավորություններ

	31.12.2020	31.12.2019
Աշխատակիցներին վճարվելիք գումարներ	52,444	45,058
Հետաձգված եկամուտ վերաապահովագրության միջնորդավճարների գծով	8,074	13,047
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	7,466	16,377
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	34,164	28,976
	102,148	**103,458**